

[1] Դուրս գրման ամսաթիվ			<b>Հաշիվ վավերագիր</b> (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Մերիա	[3] Համար
6	Դեկտեմբեր	2022 թ.		Բ	3562377686
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
6	Դեկտեմբեր	2022 թ.		Մերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
			8 Փետրվար, 2022 թ.	Թարգմանչական ծառայությունների մատուցման պայմանագիր թիվ ՀԳՂ-7-22	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
Արձանագրություն 12					
[7.1] ՀԳՄ կտրոնի համար					

Մատայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	8	2	2	7	5	6	8	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	ՍՈՖՑԱ ՍԵՐՈՒՑԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱԶ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570064545140100					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍՏՆՈՎՅ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՂՄ. 28 22							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Մատայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին նախ աշխ. գործ. վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՄԱՐԳՍՅԱՆ Փ. 5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Մատայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
NN Շ/Կ	Մատայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորներ	Շտրիաների ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Թիվ 69110922 քրեական գործով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	246.5	1000		246500
2	Թիվ 37100322 քրեական գործով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	63.5	1000		63500
3	Թիվ 57166117 քրեական գործով լեհերեն-հայերեն գրավոր թարգմանություն	էջ	2	4750		9500
4	Թիվ 57166117 քրեական գործով անգլերեն-հայերեն գրավոր թարգմանություն	էջ	0.5	1600		800
5	Ռոման Նեգրեշիկովի վերաբերյալ ԵՂ/0179/06/22 որոշման հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	5.5	1000		5500
6	22-158-20 վարույթի նյութերով հայերեն-չեխերեն գրավոր թարգմանություն	էջ	19.5	8200		159900
7	22-158-20 վարույթի նյութերով հայերեն-անգլերեն գրավոր թարգմանություն	էջ	22	1600		35200
8	22-49-20 վարույթի նյութերով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	43.5	1000		43500

9	Սպարտակ Գրիգորյանի վերաբերյալ ՌԴ ԳԴ-ից ստացված գրության ռուսերեն-հայերեն գրավոր թարգմանություն	Էջ	3	1000	3000
					567400

**Ընդամենը**

Ծանայություն  
մատուցող  
(աշխատանք  
կատարող)

SEROBYAN SOFYA 6401890169

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

06/12/2022 13:11:04

Ծանայություն  
(աշխատանք)  
ստացող՝

GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

09/12/2022 11:06:05

## ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

«30» հունիսի 2022թ.

ք.Երևան

«Վ» գլխավոր դատախազության մարդու ղեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Հ.Հ.Մովսեսյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 69110922 քրեական գործն՝ ըստ մեղադրանքի էղուարդ Աշոտի Իկիլիկյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով, 112-րդ հոդվածի 1-ին մասով, 235-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Հակոբ Մամիկոնի Թովմասյանի, Սևակ Համբարձումի Մարգարյանի, Ալիկ Տիգրանի Սուքիասյանի, Ավետիք Խաչատուրի Դանիելյանի, Էրիկ Արեստակի Բաղդասարյանի, Համլետ Վիգենի Հակոբյանի, Գոռ Խաչիկի Մարգարյանի, Արթուր Վաղինակի Մարգարյանի, Գևորգ Սաշայի Հակոբյանի, Սարգիս Հովհաննեսի Անդրեասյանի, Սամվել Արամի Խաչատրյանի, Նարեկ Արայիկի Պետրոսյանի, Նարեկ Ժիրայրի Ենոքյանի, Հրաչյա Գուրգենի Անտոնյանի, Արմեն Արթուրի Մարգարյանի, Ասլան Արշավիրի Գևորգյանի, Անդրանիկ Լեոնիկի Հարությունյանի, Միհրան Լեոնիկի Հարությունյանի, Խոսրով Քաջիկի Թուփաբյանի, Գևորգ Գուրգենի Փաշայանի, Հակոբ Գևորգի Խաչատրյանի, Ռուստամ Արթուրի Ոսոյանի, Նվեր Մայիսի Ոսոյանի, Արտյոմ Մայիսի Ոսոյանի, Ազատ Աշոտի Զաքարյանի, Գալուստ Համբարձումի Գասպարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, Տիրան Արկադիի Ավագյանի և Նարեկ Աղասու Հակոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Վ» քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննված թիվ 69110922 քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներով Գոռ Մարգարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հանրորեն վտանգավոր այն արարքի կատարման համար, որ նա 2021 թվականի նոյեմբերի 19-ին՝ կազմակերպել, ղեկավարել և իրականացրել է կազմակերպված խմբի կողմից Արմավիր համայնքի Զիվանու փողոցում զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանության կատարում, որը զուգորդվել է անձանց նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով

Նույն քրեական գործով Գևորգ Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրանք է առաջադրվել հանրորեն վտանգավոր այն արարքի կատարման համար, որ նա 2021 թվականի նոյեմբերի 19-ին, կազմակերպված խմբի կազմում ուղղակի դիտավորությամբ մասնակցել է հասարակական վայրում՝ Արմավիր համայնքի Զիվանու փողոցում, կատարված խուլիգանությանը, որը զուգորդվել է բռնություն գործադրելով և դրա սպառնալիքով, ինչպես նաև որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

2022 թվականի հունիսի 28-ին «Վ» գլխավոր դատախազությունում ստացվել է թիվ 69110922 քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը և քրեական գործը:

Նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից 2022 թվականի հունիսի 30-ին հաստատվել է թիվ 69110922 քրեական գործով մեղադրական եզրակացությունը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի կարգով քրեական գործն ուղարկվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Նախաքննությամբ պարզվել է, որ թիվ 69110922 քրեական գործով մեղադրյալներ Գոռ Մարգարյանը և Գևորգ Հակոբյանը չեն տիրապետում հայերենին, այլ տիրապետում է ռուսերենին:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:

Հաշվի առնելով, որ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 04-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ, 277-րդ հոդվածներով՝

#### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. թիվ 69110922 քրեական գործով քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալներ Գոռ Մարգարյանին և Գևորգ Հակոբյանին մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների ռուսերեն լեզվով հաստատված թարգմանությունները հանձնելու համար, դրանց ռուսերեն լեզվի թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Սերոբյանին /անձնագիր՝ AS0538862, տրված՝ 13.03.2019թ., 006-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ./ և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներին և պարտականություններին:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է սուղանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատարկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:


ՀՀ գլխավոր դատախազության  
մարդու դեմ ուղղված հանցագործությունների  
գործերով վարչության դատախազ՝



Տ.Մովսեսյան

Ատացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն ու պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախագուշացված եմ:

Թարգմանիչ՝



«30» հունիսի 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

02-ը սեպտեմբերի 2022թ.

ք. Եղեգնաձոր

Վայոց ձորի մարզի դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Ժ.Ավետիսյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 37100322 քրեական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

2022թ. սեպտեմբերի 2-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի կարգով Վայոց ձորի մարզի դատախազությունում ստացվել է ՀՀ ՔԿ Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում քննված թիվ 37100322 քրեական վարույթի նյութերն ըստ մեղադրանքի՝ Ֆրունզե Հովհիկի Բաղայանի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և ՀՀ գործող քրեական օրենսգրքի 46-254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Էդգար Խաչատուրի Գրիգորյանի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և ՀՀ գործող քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Կարապետ Ավետիքի Ներսիսյանի՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և Դավիթ Լևոնի Կարապետյանի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 204-րդ հոդվածի համաձայն՝ ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերը, հաստատել եմ թիվ 37100322 քրեական վարույթով մեղադրական եզրակացությունը:

Մեղադրյալ Ֆրունզե Հովհիկի Բաղայանը չի տիրապետում վարույթի լեզվին՝ գրական հայերենին, սակայն տիրապետում է ռուսերեն լեզվին, հետևաբար նրան հանձնման ենթակա՝ մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների պատճենները պետք է հանձնվի նաև ռուսաց լեզվով, որին մեղադրյալ Ֆ.Բաղայանը տիրապետում է:

Հաշվի առնելով, որ Սոֆյա Վազգենի Սերոբյանը (անձնագիր՝ AS 0538862, տրված՝ 13.03.2019թ., 006-ի կողմից) մասնակցել է ռուսերեն լեզվի նոտարարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորման ստուգումներին՝ ստանալով դրական միավոր, այսինքն՝ նա պատշաճ տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, միաժամանակ նա վարույթի առարկայով չձևահագրգոված անձ է, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով 7-րդ հոդվածի 2-րդ մասով, 27-րդ հոդվածի 3-րդ մասով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, 61-րդ հոդվածի 1-ին մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 37100322 քրեական վարույթով մեղադրական եզրակացությունը և դրան կցված հավելվածները հայերեն լեզվից ռուսերեն լեզվով թարգմանելու համար որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Սերոբյանին:
2. Ս.Սերոբյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված՝ նրա իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել, որ թարգմանություն կատարելուց հրաժարվելու կամ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված է քրեական պատասխանատվություն:
3. Թարգմանության իրականացման պատշաճ և իրական հնարավորության ապահովման համար Ս.Սերոբյանին տրամադրել մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների պատճենները:

Մարզի դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական

Ա.Ժ.Ավետիսյան

Թարգմանիչ Ս. Սերոբյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
թարգմանիչ հրավիրելու մասին

15.09.2022թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Տ.Խաչատրյանս, ուսումնասիրելով Կարեն Բաղամյանի վերաբերյալ Լեհաստանի Հանրապետությունից ստացված փաստաթղթերը,

**ՊԱՐՁԵՑԻ՝**

12.10.2022թ. Լեհաստանի Հանրապետությունից ստացվել են Կարեն Բաղամյանի վերաբերյալ փաստաթղթերը՝ անգլերենով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է թարգմանել լրիվ, ճիշտ և ժամանակին, իր ստորագրությամբ հաստատել ապացուցողական կամ վարույթային այլ գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներին հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝ վարույթի լեզուն գրական հայերենն է, (...) այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ, ՀՀ-ից ստացվել է օտարալեզու փաստաթուղթ, իսկ Մարինե Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ և 61-րդ հոդվածներով,

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Կարեն Բաղամյանի վերաբերյալ փաստաթղթերը անգլերենից հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Մարինե Սերոբյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AM0470399, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ դիպլոմ AB140214) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության

սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չիրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարութային այլ գործողության ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները.

ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ



S. Խաչատրյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Մ. Ստեփոյան

« 15 » 09 ..... 2022թ.

**ՈՐՈՇՈՒՄ**  
թարգմանիչ հրավիրելու մասին

15.09.2022թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Տ.Խաչատրյանս, ուսումնասիրելով Կարեն Բաղամյանի վերաբերյալ Լեհաստանի Հանրապետությունից ստացված փաստաթղթերը,

**ՊԱՐԶԵՑԻ՝**

12.10.2022թ. Լեհաստանի Հանրապետությունից ստացվել են Կարեն Բաղամյանի վերաբերյալ փաստաթղթերը՝ լեհերենով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է թարգմանել լրիվ, ճիշտ և ժամանակին, իր ստորագրությամբ հաստատել ապացուցողական կամ վարույթային այլ գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներին հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝ վարույթի լեզուն գրական հայերենն է, (...) այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ, ՀՀ-ից ստացվել է օտարալեզու փաստաթուղթ, իսկ Արամ Հախինյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ և 61-րդ հոդվածներով,

**ՈՐՈՇԵՑԻ**


1. Կարեն Բաղամյանի վերաբերյալ փաստաթղթերը լեհերենից հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Արամ Հախինյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AM0751292, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 16.05.2003թ.) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության

սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարութային այլ գործողության ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները.


ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ



S.Խաչատրյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Ա.Հախինյան

« 15 » 09 ..... 2022թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### Թարգմանիչ հրավիրելու մասին

16 սեպտեմբերի 2022թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, քննարկելով ՌԴ իրավասու մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասի (խարդախություն) մեղադրանքով հետախուզվող, Ռոման Անատոլիի Նեգրեշնիկովին հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ ԵԴ/0179/06/22 որոշումը,

### ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի, քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, 2022 թվականի փետրվարի 10-ին, Շարմ Էլ Շեյխ-Երևան թիվ 993 չվերթի ժամանումից հետո՝ հայտնաբերել և ժամը 09<sup>15</sup>-ին, բաժին են բերման ենթարկել, Ռուսաստանի Դաշնության Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) ներքին գործերի նախարարության Արխանգելսկի մարզի Օնեժսկի շրջանի ՆԳ վարչության միջոցով 2016 թվականի հունիսի 7-ից, այդ երկրի քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասի (խարդախություն) մեղադրանքով հետախուզվող, Ռոման Անատոլիի Նեգրեշնիկովին, ում նույն օրը՝ ժամը 12<sup>15</sup>-ին, ձերբակալել են:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Պողոսյան) 2022 թվականի փետրվարի 12-ի № ԵԴ/0092/06/22 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը, Ռոման Նեգրեշնիկովի նկատմամբ 40 (քառասուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 18-ի և 2022 թվականի մայիսի 5-ի № ԵԴ/0179/06/22 որոշումներով բավարարվել է նաև Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը, Ռոման Նեգրեշնիկովին հանձնելու համար 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորում կիրառելու և կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդությունները:

Հաշվի առնելով, որ Ռոման Նեգրեշնիկովի կալանքի տակ պահելու ժամկետը լրանում է 2022 թվականի սեպտեմբերի 18-ին, մինչդեռ նրա պաշտպանի կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարի 2022 թվականի մարտի 16-ի կայացրած որոշման դեմ, որի վերաբերյալ դեռևս որոշում չի կայացվել, 2022 թվականի սեպտեմբերի 6-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ ԵԴ/0179/06/22 որոշմամբ բավարարվել է միջնորդությունը :

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ Ռոման Նազրեշիկովը չի տիրապետում հայոց գրավոր լեզվին, իսկ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Ռոման Նազրեշիկովին հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ ԵԴ/0179/06/22 որոշումը գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AS սերիայի թիվ 0538862, տրված 13.05.2019թ . , 006-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ. ) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ,

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական

Ա. Կոստանդյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատրասխանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

*Սոֆյա Սերոբյան*

«16».....09..... 2022թ.

*Սոֆյա Սերոբյան*

**ՈՐՈՇՈՒՄ**

թարգմանիչ ներգրավելու մասին

22.09.2022թ.

ք. Երևան

«Վիսավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ, երկրորդ դասի խորհրդական Ն. Տեր-Թորոսյանս, վերանայելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում սկսված թիվ 22-158-20 վարույթի նյութերը,

**ՊԱՐԶԵՑԻ՝**

2020 թվականի հոկտեմբերի 9-ին «Վիսավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Սուրեն Պատվականի Ավագյանին պատկանող գույքի վերաբերյալ սկսվել է թիվ 22-158-20 ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել միջազգային հարցում ուղարկել Չեխիայի Հանրապետություն:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ անհրաժեշտ է որպես թարգմանիչ ներգրավել թարգմանիչ Սիրանուշ Ալեքսանդրի Աղաբեկյանին (Ա/Հ փաստաթղթի համար՝ AS0218090, տրված՝ 06.06.2018թ., վավերական է մինչև 06.06.2028թ., «Արդարադատության նախարարության կողմից 07.09.2015թ. տրված տեղեկանք՝ նոտարական գործողությունների մասնակցող թարգմանչի որակավորում ստանալու մասին):

Սիրանուշ Աղաբեկյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է հայերեն և չեխերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:


Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներով,

**ՈՐՈՇԵՑԻ՝**

Սուրեն Պատվականի Ավագյանին պատկանող գույքի վերաբերյալ «Վիսավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում սկսված թիվ 22-158-20 վարույթով թարգմանություն իրականացնելու համար ներգրավել թարգմանիչ Սիրանուշ Ալեքսանդրի Աղաբեկյանին (Ա/Հ փաստաթղթի համար՝ AS0218090, տրված՝ 06.06.2018թ., վավերական է մինչև 06.06.2028թ., «Արդարադատության նախարարության կողմից 07.09.2015թ. տրված տեղեկանք՝ նոտարական գործողությունների մասնակցող թարգմանչի որակավորում ստանալու մասին):

Սիրանուշ Աղաբեկյանին նախագգուշացնել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության հիմքերի վերաբերյալ տվյալները և դրա ընթացքի ու արդյունքների մասին տեղեկություններն առանց իրավասու մարմնի թույլտվության հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի  
ծագում ունեցող գույքի բռնագանձման  
գործերով վարչության դատախազ



Ն. Տեր-Թորոսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սրացա սույն որոշման օրինակը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի քաղվածքը:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախագգուշացված եմ:

Թարգմանիչ



Սիրանուշ Աղաբեկյան

« 22 » 09 2022 թ.

**ՈՐՈՇՈՒՄ**

թարգմանիչ ներգրավելու մասին

22.09.2022թ.

ք. Երևան

«Վալսալոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ, երկրորդ դասի խորհրդական Ն. Տեր-Թորոսյանս, վերանայելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում սկսված թիվ 22-158-20 վարույթի նյութերը,

**ՊԱՐԶԵՑԻ՝**

2020 թվականի հոկտեմբերի 9-ին «Վալսալոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Սուրեն Պատվականի Ավագյանին պատկանող գույքի վերաբերյալ սկսվել է թիվ 22-158-20 ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել միջազգային հարցում ուղարկել Միացյալ Թագավորություն:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ անհրաժեշտ է որպես թարգմանիչ ներգրավել թարգմանիչ Մարինե Վազգենի Սերոբյանի (Ա/Հ փաստաթղթի համար՝ AN0470399, տրված՝ 13.05.2013թ., վավերական է մինչև 13.05.2023թ., համապատասխան կրթությունը հավաստող թիվ AB140214 դիպլոմ):

Մարինե Սերոբյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է հայերենին և անգլերենին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներով,

**ՈՐՈՇԵՑԻ՝**

Սուրեն Պատվականի Ավագյանին պատկանող գույքի վերաբերյալ «Վալսալոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում սկսված թիվ 22-158-20 վարույթով թարգմանություն իրականացնելու համար ներգրավել Մարինե Վազգենի Սերոբյանին (Ա/Հ փաստաթղթի համար՝ AN0470399, տրված՝ 13.05.2013թ., վավերական է մինչև 13.05.2023թ., համապատասխան կրթությունը հավաստող թիվ AB140214 դիպլոմ):

Մարինե Սերոբյանին նախազգուշացնել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության

հիմքերի վերաբերյալ տվյալները և դրա ընթացքի ու արդյունքների մասին տեղեկություններն առանց իրավասու մարմնի թույլտվության հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի  
ծագում ունեցող գույքի բռնագանձման  
գործերով վարչության դատախազ



Ն. Տեր-Թորոսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արացա սույն որոշման օրինակը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի քաղվածքը:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Մարինե Սերոբյան

«22» 09 2022 թ.

**ՈՐՈՇՈՒՄ**  
թարգմանիչ հրավիրելու մասին

23.09.2022թ.

ք. Երևան

«Վալսալոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Տ.Ենոքյանս, վերանայելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունում սկսված թիվ 22-49-20 վարույթի նյութերը,

**ՊԱՐԶԵՑԻ՝**

2020 թվականի հոկտեմբերի 7-ին «Վալսալոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում Հովիկ Արզամի Աբրահամյանին պատկանող գույքի վերաբերյալ սկսվել է թիվ 22-49-20 ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել միջազգային հարցում ուղարկել Ռուսաստանի Դաշնություն:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Վազգենի Սերոբյանին (Ա/Հ փաստաթղթի համար՝ AS0538862, տրված՝ 13.03.2019թ., 006-ի կողմից, առկա է ՀՀ ԱՆ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի տեղեկանք, ռուսերեն լեզվի թարգմանություն իրականացնելու համար, տրված՝ 27.12.2019թ.՝ անժամկետ):

Սոֆյա Սերոբյանն ունի համապատասխան կրթություն, ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածներով,


**ՈՐՈՇԵՑԻ՝**

Հովիկ Արզամի Աբրահամյանին պատկանող գույքի վերաբերյալ «Վալսալոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում սկսված թիվ 22-49-20 վարույթով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել թարգմանիչ Սոֆյա Վազգենի Սերոբյանին (Ա/Հ փաստաթղթի համար՝ AS0538862, տրված՝ 13.03.2019թ., 006-ի կողմից, առկա է ՀՀ ԱՆ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի տեղեկանք, ռուսերեն լեզվի թարգմանություն իրականացնելու համար, տրված՝ 27.12.2019թ.՝ անժամկետ):

Սոֆյա Սերոբյանին նախազգուշացնել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության

հիմքերի վերաբերյալ տվյալները և դրա ընթացքի ու արդյունքների մասին տեղեկություններն առանց իրավասու մարմնի թույլտվության հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի տեղակալ



Տ.Տնոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սկսած սույն որոշման օրինակը և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի քաղվածքը:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 484-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Սոֆյա Սերոբյան

«23» 09 2022 թ.

**ՈՐՈՇՈՄ**

թարգմանիչ հրավիրելու մասին

22.09.2022թ.

ք.Երևան

Ե՛ւ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Գ. Մելիքյանս, ուսումնասիրելով ՍՊԱՐՏԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ հանձնումն միջնորդության կապակցությամբ ՌԴ գլխավոր դատախազությունից ստացված լրացուցիչ տեղեկությունը,

**ՊԱՐԶԵՑԻ**

21.09.2022թ. Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմինների կողմից հետախույզվող ՌԴ թաղարացի ՍՊԱՐՏԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ հայտնաբերվել և հետազոտում կապակցությամբ լ. Հայտնության Հանրապետության իրավապահ մարմինների կողմից:

20.09.2022թ. որոշում է կայացվել ՍՊԱՐՏԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ հանձնումը քաղաքացու մասին: ՍՊԱՐՏԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ փաստաթանի կողմից ՀՀ գլխավոր դատախազի վերոնշյալ որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: Նիսի քննարկում փաստաթանի կատարած հայտարարության կապակցությամբ ՌԴ գլխավոր դատախազությունից պահանջվել է լրացուցիչ տեղեկությունը: 23.09.2022թ. ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է ՌԴ գլխավոր դատախազության 22.09.2022թ. գրությունը որի ոտսերեն լեզվով է:

Քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի համաձայն թարգմանիչը պարտավոր է ստորագրությամբ հաստատել (...)վարույթի հանրային մասնավոր մասնակիցներին հանձնվող փաստաթղթերում թարգմանության 62-րդ հոդվածի կետերով:

Քննարկում նույնպես, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն վարույթի լեզուն հայերենն է, իսկ ՍՈՖՅԱ ՍԵՐՈԲՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում վերաբերյալ քրեական գործառնություններ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կապված էր հարցաքննության որպիսի պայմաններում ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 27-րդ, 61-րդ հոդվածներով,

**ՈՐՈՇԵՑԻ**

ՍՊԱՐՏԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ հանձնումը մասին միջնորդության կապակցությամբ ստացված լրացուցիչ տեղեկությունների հսկերեն գրավոր թարգմանությունն ընդունելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍՈՖՅԱ ՍԵՐՈԲՅԱՆԻԸ (անձագիր AS0538862, տեղեկանք տրված ՀՀ ԱՆ 27.12.2019թ.) և նրան հարմարեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված իր իրավունքները և պարտականությունները:

2022 թ. 09 ամսին նախագրուչացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը պատժվում

զանքով՝ պատվում է տուգանքով՝ առավելագույնը քանապատիկի չափով, համարային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կարճաժամկետ ազատագրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազգրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. մանին պարգևատրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց պայմանի իրականացնող մարմնի թույլտվության չիրապարակել իր ծանկցությամբ կատարված ապացուցողական կամ վարության այլ տեսակի գործունեության, ինչպես նաև դրնփակ դատական նիստի ընթացքում իրեն հայտնի դրած տեղեկությունները:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-խրախակառուցչության վարչության դատախազ

Գ. Մկիթյան

Սկսած 2022 թվականի օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտավորությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի պահանջներին պարտախախտման մասին լազիազգուշացված եմ:

Թվում

« 22 » 09 ..... 2022թ.

Գ. Մկիթյան